

**Դատական Գործ N: ԵԷԴ/1210/02/14**

<b>Հայցադիմումը /դիմումը/ ստացվել է:</b>	23-05-2014
<b>Հայցվոր/դիմող</b>	
Անուն:	ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն
Հասցե:	ք.Երևան Կառավարական տուն 3
ՀՎՀՀ:	02508046
<b>Պատասխանող</b>	
Անուն:	<<Բիո Ունիվերսալ>>ՍՊԸ
Հասցե:	ք.Երևան Ավանեսովի 2/1 շին. 44
ՀՎՀՀ:	00445672
<b>Պատասխանող</b>	
Անուն:	<<Դր. Թոմաս Մյուլլեր-Ցուխտ-ունդ Նուտցվիխ>>կազմակերպություն
Հասցե:	ԳԴՀ 39517 Բրուզտալ ՕՏ Բլեթց Բրայթս փողոց 20
<b>Ինքնուրույն պահանջ ներկայացնող:</b>	
<b>3-րդ անձ</b>	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	
<b>Պահանջ:</b>	1837800 ՀՀ դրամ գումար բռնագանձելու պ/մ
<b>Հիմնական պահանջի վիճակագրության տողի համարը:</b>	11.1
<b>Պատասխանի ստացման ամսաթիվը:</b>	
<b>Լրացուցիչ պահանջի վիճակագրության տողի համարը:</b>	
<b>Ստացման կարգը:</b>	Առաջին անգամ
<b>Այլ նշումներ:</b>	
<b>Ամսաթիվ:</b>	23-05-2014
<b>Նախագահող դատավոր</b>	
Դատարանի անվանում:	Էրեբունի և Նուբարաշեն
Դատավորի անուն:	Լիզա Ռաֆիկի Գրիգորյան
<b>Դատավոր</b>	
Դատարանի անվանում:	Էրեբունի և Նուբարաշեն
Դատավորի անուն:	
<b>Անդորրագրի ներկայացման ամսաթիվ:</b>	23-05-2014

<b>Պետ. տուրք (ՀՀ դրամ):</b>	36756
<b>Այլ նշումներ:</b>	
<b>Ամսաթիվ:</b>	29-05-2014
<b>Որոշման հիմքը</b>	
Հոդված	87-92, 144-145
<b>Հայցադիմումի վերադարձման որոշման ամսաթիվ:</b>	26-05-2014
<b>Ելքի համար:</b>	
<b>Այլ նշումներ:</b>	
<b>Օրենսգիրք:</b>	Քաղաքացիական դատավարության օրենսգիրք
<b>Ամսաթիվ:</b>	26-05-2014
<b>Պետ. տուրք (ՀՀ դրամ):</b>	36756
<b>Այլ նշումներ:</b>	
<b>Դատական ակտ (վճիռ, որոշում):</b>	<p>ՀՀ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԷՐԵՐՈՒՆԻ ԵՎ ՆՈՒԲԱՐԱՇԵՆ ՎԱՐՉԱՎԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ</p> <p>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ</p> <p>Հ Ա Յ Ց Ա Դ Ի Մ Ո Ւ Մ Ը Վ Ե Ր Ա Դ Ա Ր Ձ Ն Ե Լ Ո Ւ Մ Ա Ս Ի Ն</p> <p>26.05.2014թ. ԵԷԴ/1210/02/14 ք.Երևան</p> <p>Երևան քաղաքի էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆՍԻ ծանոթանալով ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից ներկայացրած հայցադիմումին.</p> <p><b>Պ Ա Ր Ձ Ե Ց Ի</b></p> <p>ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ «Բիո Ունիվերսալ» ՍՊ ընկերության, «Դր. Թոմաս Մյուլլեր-Ցուխտ-Ունդ-Նուտցվիհ» կազմակերպության՝ գումարի բռնագանձման պահանջի մասին:</p> <p>Գտնում եմ, որ հայցադիմումը ենթակա է վերադարձման հետևյալ պատճառաբանությամբ. Համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 92-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետի՝ «Դատավորը վերադարձնում է հայցադիմումը եթե՝ չեն պահպանվել սույն օրենսգրքի 87 հոդվածում սահմանված՝ հայցադիմումի ձևին և բովանդակությանն առաջադրվող պահանջները»: Հայցվոր կողմը չի պահպանել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 87-րդ հոդվածով սահմանված պահանջները, մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 87-րդ հոդվածի 2-րդ 7-րդ ենթակետի պահանջը, այն է՝ «2. Հայցադիմումում պետք է նշվեն՝ 7) հայցվորի պահանջները, իսկ մի քանի պատասխանողների դեմ</p>

	<p>հայց հարուցելիս, հայցվորի՝ նրանցից յուրաքանչյուրին ուղղված պահանջները:</p> <p>Հայցվորը որպես պատասխանողներ նշել է «Բիո Ունիվերսալ» ՍՊ ընկերությանը և «Դր. Թոմաս Մյուլլեր-Ցուխտ-Ունդ-Նուտցվիի» կազմակերպությանը, սակայն հայցի «խնդրում եմ» մասում խնդրել է գումարը բռնագանձել «Բիո Ունիվերսալ» ՍՊ ընկերությունից, այսինքն հայցադիմումը որևէ նշում չի պարունակում պատասխանող «Դր. Թոմաս Մյուլլեր-Ցուխտ-Ունդ-Նուտցվիի» կազմակերպությանն ուղղված պահանջի վերաբերյալ, որը հիմք է սույն հայցադիմումը վերադարձնելու համար:</p> <p>ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 92-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝  «Հայցադիմումում թույլ տրված խախտումները վերացվելու և եռօրյա ժամկետում դատարան կրկին ներկայացվելու դեպքում հայցադիմումը դատարանում ընդունված է համարվում սկզբնական ներկայացնելու օրը»:  Շարադրվածն ընդունելով հիմք և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 87-92 և 144-145 հոդվածներով՝</p> <p><b>Ո Ր Ո Շ Ե Ց Ի</b></p> <p>ՀՀ գյուղատնտեսության նախարարության ընդդեմ «Բիո Ունիվերսալ» ՍՊ ընկերության, «Դր. Թոմաս Մյուլլեր-Ցուխտ-Ունդ-Նուտցվիի» կազմակերպության՝ գումարի բռնագանձման պահանջի մասին հայցադիմումը վերադարձնել:  Որոշումը պատշաճ ձևով ուղարկել գործին մասնակցող անձանց՝ որոշումը կայացնելու օրվանից եռօրյա ժամկետում:  Դատարանի որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ դիմողի կողմից այն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում:</p> <p><b>ԴԱՏԱԿՈՐ՝ Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ</b></p>
<b>Դատական ակտի ամսաթիվը:</b>	26-05-2014
<b>Ակտով հոգուտ պետ. բյուջեի բռնագանձման ենթակա պետ. տուրքի չափը (ՀՀ դրամ):</b>	0
<b>Այլ նշումներ:</b>	
<b>Ներկայացման ամսաթիվ:</b>	05-06-2014
<b>Ամսաթիվ:</b>	05-06-2014
<b>Նախագահող դատավոր</b>	
Դատարանի անվանում:	Էրեբունի և Նուբարաշեն
Դատավորի անուն:	Լիզա Ռաֆիկի Գրիգորյան
<b>Դատավոր</b>	
Դատարանի անվանում:	Էրեբունի և Նուբարաշեն
Դատավորի անուն:	
<b>Անդորրագրի ներկայացման ամսաթիվ:</b>	05-06-2014

<b>Պետ. տուրք (ՀՀ դրամ):</b>	36756
<b>Այլ նշումներ:</b>	
<b>Որոշման ամսաթիվ:</b>	06-06-2014
<b>Այլ նշումներ:</b>	
<b>Ներկայացվել է միջնորդություն:</b>	Ապահովում կիրառելու
<b>Բավ/մերժ:</b>	Մերժվել է
<b>Որոշման ամսաթիվ:</b>	06-06-2014
<b>Տրվել է կատարողական թերթ:</b>	
<b>Հայցի ապահովման միջոցները:</b>	Գույքի դրամական միջոցների վրա արգելանք դնելը
<b>Այլ նշումներ:</b>	<p>ՀՀ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԻ ԷՐԵՐՈՒՆԻ ԵՎ ՆՈՒԲԱՐԱՇԵՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ</p> <p>Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՅՑԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑ ՁԵՌՆԱՐԿԵԼՈՒ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՌՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ</p> <p>06.06.2014թ. ԵԷԴ/1210/02/14 ք. Երևան</p> <p>Երևան քաղաքի էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր՝ Լ. Գրիգորյանս քննարկելով ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից ներկայացված հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը.</p> <p><b>Պ Ա Ր Զ Ե Ց Ի</b> ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ «Բիո Ունիվերսալ» ՍՊ ընկերության, «Դր. Թոմաս Մյուլլեր-Ցուխտ-Ունդ-Նուտցվիհ» կազմակերպության՝ 1 837 800 ՀՀ դրամ գումար բռնագանձելու պահանջի մասին:</p> <p>Միաժամանակ հայցվորի ներկայացուցիչը դատարանին միջնորդել է հայցագնի չափով արգելանք դնել պատասխանողին սեփականության իրավունքով պատկանող գույքի, դրամական միջոցների վրա:</p> <p>ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 97 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ միջոցներ է ձեռնարկում հայցի ապահովման համար, եթե նման միջոցներ չձեռնարկելը կարող է անհնարին դարձնել կամ դժվարացնել դատական ակտի կատարումը կամ հանգեցնել վեճի առարկա հանդիսացող գույքի վիճակի վատթարացմանը:</p> <p>Նշված իրավական նորմի վերլուծությունից բխում է, որ հայցի ապահովման միջոց ձեռնարկելու համար հիմք են հանդիսանում դատական ակտի կատարման անհնարինության, կամ դժվարացման ինչպես նաև գույքի վիճակի վատթարացման վերաբերյալ հանգամանքները: Միջնորդությունը որևէ հիմնավորում չի պարունակում հայցի ապահովման միջոց չձեռնարկելու դեպքում դատական ակտի կատարումն անհնարին դարձնելու կամ դժվարացնելու հանգամանքների վերաբերյալ:</p>

	<p>Այս պարագայում հայցվորի կողմից չի ներկայացվել որևէ ապացույց, ըստ որի պատասխանողի գույքի, դրամական միջոցների վրա արգելանք չդնելը կարող է անհնարին դարձնել կամ դժվարացնել դատական ակտի կատարումը, ուստի գտնում են, որ միջնորդությունն անհիմն է, չի բխում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 97 և 98 հոդվածների պահանջներից և ենթակա է մերժման: Հայցվորի այն պատճառաբանությունը, որ պատասխանողները մինչ օրս որևէ քայլ չեն ձեռնարկել պայմանագրային պարտավորությունների թերի մասը կատարելու ուղղությամբ և կարող են խուսափել դատական ակտի կատարման փուլում, դատարանը բավարար չի համարում եզրակացնելու, որ պատասխանողները կխոչընդոտեն դատական ակտի կատարմանը: Դատարանը նման եզրահանգման գալիս է նաև այն պատճառաբանությամբ, որ պատասխանողները հանդիսանում են իրավաբանական անձինք, ինչպես նաև հաշվի է առնում գումարի չափը:</p> <p>Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 97, 98-րդ, 144 և 145 հոդվածներով՝ Ո Ր Ո Շ Ե Ց Ի</p> <p>ՀՀ գյուղատնտեսության նախարարության՝ հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը մերժել:</p> <p>Որոշումը պատշաճ ձևով եռօրյա ժամկետում ուղարկել գործին մասնակցող անձանց:</p> <p>ԴԱՏԱՎՈՐ Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ</p>
Նշանակվել է դատական նիստ:	
Որոշման բովանդակություն:	
Դատաքննության ամսաթիվ:	07-07-2014
Ծանուցագիրը ուղարկվել է:	09-06-2014
Այլ նշումներ:	
Ժամ:	10:00
Նիստերի դահլիճի համար:	6
Նշանակվել է:	Դատաքննություն
Նիստը:	Կայացվել է
Պատճառը:	
Դատաքննության ամսաթիվ:	25-08-2014
Ծանուցագիրը ուղարկվել է:	07-07-2014
Այլ նշումներ:	
Ժամ:	15:30
Նիստերի դահլիճի համար:	6
Նշանակվել է:	Նախնական դատական նիստ
Նիստը:	
Պատճառը:	